Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2022-2023 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է իր առաջին արտադրանքը տվել Երևանի արհեստական կաուչուկի գործարանը. 0,5 մ.
   ա) 1929 թ. բ) 1933 թ. գ) 1937 թ. դ) 1940 թ.
2. Լուսավորչի տոհմից ո՞վ է հաստատվել Հայոց Արևելից կողմերի, Աղվանքի ու Վիրքի եպիսկոպոսապետ. 0,5 մ.
   ա) Վրթանես բ) Գրիգորիս գ) Հուսիկ դ) Արիստակես
3. Որտե՞ղ էր գտնվում Արծնի գյուղը. 0,5 մ.
   ա) Բասեն գավառում բ) Բագրևանդ գավառում գ) Վանանդ գավառում դ) Շիրակ գավառում
4. Ո՞վ է գրավել Վահկա բերդն ու այն դարձրել Կիլիկյան Հայաստանի իշխանանիստ. 0,5 մ.
   ա) Կոստանդին I բ) Թորոս I գ) Ռուբեն I դ) Լևոն I
5. Ո՞ր թվականին է կնքվել Հալեպի պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 1862 թ. բ) 1896 թ. գ) 1895 թ. դ) 1904 թ.
6. Քանի՞ արդյունաբերական ձեռնարկություն շահագործման հանձնվեց ու գործարկվեց Խորհրդային Հայաստանում 1928-1937 թթ.. 0,5 մ.
   ա) 36 բ) 34 գ) 58 դ) 44
7. Հայ ազատագրական պայքարի ու քաղաքական ո՞ր գործչի իսկական անունն էր Մատթեոս Սարգսյան. 0,5 մ.
   ա) Գարուն Աղասի բ) Նիկոլ Դուման գ) Արմեն Գարո դ) Փարամազ
8. Ե՞րբ է Ալեքսանդր Մակեդոնացին իր բանակով անցել սևծովյան նեղուցները և պատերազմ սկսել Աքեմենյան տերության դեմ. 0,5 մ.
   ա) Ք.ա. 336 թ. բ) Ք.ա. 334 թ. գ) Ք.ա. 331 թ. դ) Ք.ա. 323 թ
9. Ե՞րբ է ՀՀ խորհրդարանի նախագահ ընտրվել Ավետիս Ահարոնյանը (նշե՛ք թիվը, ամիսը և օրը): 0,5 մ.
10. Հայ ո՞ր գրողի անունն է կրում Հայաստանի առաջին պետական դրամատիկական թատրոնը: 0,5 մ.
11. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հայազգի զորահրամանատարներից ո՞վ է հետագայում արժանացել ԽՍՀՄ ինժեներական զորքերի մարշալի կոչման: 0,5 մ.
12. Իրաքից որքա՞ն հայ հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան 1921 թ. վերջին: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Դողսի ճակատամարտը
    բ) Ներսեհապատի ճակատամարտը
    գ) Վարդանակերտի ճակատամարտը
    դ) Սևանի ճակատամարտը
    ե) Ակոռիի ճակատամարտը
    զ) Արաբների ջախջախումը Արծափ ամրոցի մոտ
    է) Արյան լճի ճակատամարտը
    ը) Ճարմանայի ճակատամարտը
    թ) Արծնիի ճակատամարտը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Անի 2. Արշամաշատ 3. Կապան 4. Սամոսատ 5. Լոռե 6. Կարս
    ա. Տաշիր-Ձորագետ բ. Կոմմագենե գ. Սյունիք դ. Վանանդ ե. Շիրակ զ. Ծոփք

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Շումերական աղբյուրները վկայում են, որ հայասացիները կարող էին մարտադաշտ հանել 700 մարտակառք և 10-հազարանոց հեծելազոր:
    բ) Ասորեստանյան աղբյուրներում Ուրարտու պետության և նրա թագավոր Արամուի (Արամեի) մասին առաջին հիշատակությունը վերաբերում է Ք.ա. 859 թ.:
    գ) Ք.ա. 830-ական թթ. սկզբին Սարդուրի I-ը Վանա լճի հյուսիսարևելյան ափին հիմնադրել է նոր մայրաքաղաք Սարդուրիխինիլին:
    դ) Ք.ա. 550 թ. Կյուրոս Մեծի ստեղծած պարսկական տերությունը տարածվում էր Բալկանյան թերակղզուց մինչև Չինաստան:
    ե) 62 թ. հայ-պարթևական միացյալ ուժերը Հռանդեայի ճակատամարտում ջախջախել են հռոմեացի զորավար Կորբուլոնի բանակը:

զ) Տիգրան Մեծի ստեղծած Հայկական տերությունը կամ Հայկական աշխարհակալությունը շուրջ 10 անգամ գերազանցում էր Մեծ Հայքի տարածքը:
է) Հայկական լեռնաշխարհի տարածքում էնեոլիթյան լավ պահպանված իրեր են հայտնաբերվել Շենգավիթի, Լճաշենի ու Ազոխի դամբարանների պեղումներից:
ը) Ք.ա. 786 թ. հինավուրց Արմավիրի հարևանությամբ Արգիշտի Ի-ը հիմնադրել է մի անառիկ քաղաք-ամրոց՝ Արգիշտիխինիլի անվամբ:
թ) Վանի թագավորության նշանավոր գահակալներից Ռուսա II-ը ներկայիս քաղաքամայր Երևանի տարածքում կառուցել է քաղաքական ու տնտեսական կարևոր կենտրոն Թեյշեբաինին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Օսմանյան կայսրության մեջ հայազգի ամենահարուստ և ազդեցիկ մարդիկ, որոնք մեծ ազդեցություն ունեին սուլթանական պալատում, հայոց պատրիարքների վրա ու հայ համայնքում, հայտնի էին խոջաներ անունով:
բ) 1894 թվականից Աբդուլ Համիդ II-ի հրամանով քրդերից կազմված անկանոն հետևակազորը, որը քրիստոնյաներին թալանելու ու կոտորելու համար էր ստեղծվել, հայտնի էր համիդիե անունով:
գ) XVIII դ. վերջից Իրանի սահմանամերձ խոշոր ռազմավարչական միավորների կառավարիչներին, որոնք մեծարվում էին խան տիտղոսով և խանության զինված ուժերի ընդհանուր հրամանատարներն էին, սկսել են անվանել սարդար:
դ) Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության մեջ կայսրին ընտրող յուրաքանչյուր յոթ իշխաններից յուրաքանչյուրը կոչվում էր կուրֆյուրստ կամ կայսրընտիր:
ե) Սելջուկ-թյուրքերի տիրապետության շրջանում Հայաստանի տարածքում ստեղծվել են վարչաքաղաքական նոր միավորներ՝ ուլուսներ ու իլխանություններ:
զ) Հայաստանի ազատագրության ծրագիրը, որը կազմել էին Հ. Արղությանը և Մ. Սարաֆյանը, հայտնի էր «Հյուսիսային ծրագիր» անունով:
է) Ըստ Ղուրանի որոշ դրույթների՝ մահմեդականները «անհավատների» դեմ պետք է մղեն սրբազան պատերազմ՝ «մուհաջիր», որին մասնակցելը համարվել է յուրաքանչյուր մարտունակ մահմեդականի սրբազան պարտքը:
ը) Ուշ միջնադարում հայ իշխանական տների ներկայացուցիչները, որոնք մի շարք վայրերում վերականգնել էին իրենց ժառանգական իշխանությունն ու վարչական կառավարումը, հայտնի էին պարոնտեր անունով:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 1918 թ. մայիսին Բաթումում վերսկսված թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցություններն արդյունք չեն տվել:
բ) 1919 թ. հունիսին ՀՀ-ում կայացած խորհրդարանական առաջին ընտրություններում ընտրվել են նաև չորս կին և երեք այլազգի պատգամավորներ:
գ) Հայրենանպաստ գործունեության և անուրանալի ավանդի համար Արամ Մանուկյանն իրավամբ համարվում է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրը:
դ) 1920 թ. Ալեքսանդրապոլում բոլշևիկների մայիսյան ապստամբության ճնշման գործում հատկապես աչքի է ընկել հայդուկապետ Սեպուհի գլխավորած զորամասը:
ե) 1920 թ. հունվարին հիմնադրված Հայաստանի համալսարանի առաջին ռեկտոր է նշանակվել պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը:
զ) 1920 թ. նոյեմբերի 29-ին Երևանում ստորագրվել է հայ-ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը հայտարարվում էր «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն»:
է) 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում կայացած համազանգեզուրյան 2-րդ համագումարում երկրամասը հռչակվել է անկախ և կոչվել Լեռնահայաստան:
ը) 1940 թ. դրությամբ Հայաստանում ուժի ու հարկադրանքի կիրառմամբ ավարտվել է կոլեկտիվացումը, ստեղծվել էին շուրջ 1000 կոլտնտեսություններ:
թ) Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է շուրջ 600 հազար հայ, որոնցից մոտ 200 հազարը զոհվել է պատերազմի դաշտում:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամի հիմնադրած Վահրամյանների իշխանության կենտրոնը Ամբերդն էր, իսկ իշխանությունն ընդգրկում էր Հայաստանի հյուսիսարևելյան գավառները (Տավուշ, Կողբոփոր, Գարդման, Փառիսոս):

Ուղղում. ոչ թե՝ ———————— (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ ———————— (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Որովհետև (թյուրք) Արսուբան ամիրայի որդուն ---------- -ը մահացու վիրավորել էր, սուլթանը, նրան տեսնելով, ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, բայց եթե մեռնի, կհրամայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ ---------- -ը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ եթե ուրիշինն է, այդ չգիտեմ»»:

ա. Ո՞վ է մեջբերման մեջ հիշատակված խիզախ հայ զորականը:

բ. Ե՞րբ է տեղի ունեցել վերոհիշյալ դեպքը:

գ. Ո՞ր պատմիչն է նկարագրել սելջուկյան արշավանքները և վերոհիշյալ դեպքը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ են վերագրվում ստորև մեջբերված խոսքերը. 0,5 մ.
«Ես ցանկացա, որ հռոմեացիները գնահատվեն ըստ իրենց արդար աշխատանքի պտուղների»:
ա) Սկիպիոն Աֆրիկացի բ) Սերվիոս Տուլիոս գ) Տիբերիոս Գրաքոս դ) Գայոս Գրաքոս
2. Լուսավորյալ արքաների դարաշրջանում ո՞վ էր Ավստրիայի տիրակալը. 0,5 մ.
ա) Յոզեֆ II բ) Ֆրիդրիխ II գ) Ստանիսլավ Ավգուստ դ) Գուստավ I
3. Ե՞րբ է կազմվել «Քաղաքացիական իրավունքի հավաքածու»-ն. 0,5 մ.
ա) 527 թ. բ) 555 թ. գ) 534 թ. դ) 537 թ.
4. Ո՞վ էր Փարիզի վեհաժողովում «Մեծ հնգյակի» անդամ Ֆրանսիայի վարչապետը. 0,5 մ.
ա) Ժ. Կլեմանսո բ) Է. Էրրիո գ) Լ. Բլյում դ) Է. Դալադիե
5. Ի՞նչ էին կոչվում նախկին Բրիտանական կայսրության ինքնակառավարվող որոշ տարածքներն ու նախկին գաղութները, որոնցում պետության ղեկավար էր համարվում Անգլիայի թագավորը, իսկ անմիջական կառավարումն իրականացնում էր թագավորի նշանակած գեներալ-նահանգապետը. ---------- 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Ժան Կալվին	2. Իգնատիոս Լոյոլա	3. Ժաննա դ'Արկ	4. Ջոն Ուիկլիֆ
ա. «Հիսուսի ընկերություն»	բ. «ազգային հերետիկոսություն»	գ. «Ժնևի պապ»	դ. «Օռլեանի կույս»

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 1924 թ. Մեծ Բրիտանիայում կայացած ընտրություններում պահպանողականները ջախջախիչ հաղթանակ են տարել ու կազմել նախապատերազմյան իրենց վերջին կառավարությունը:
բ) 1925 թ. Իրանի մեջլիսը Ռեզա խանին հռչակել է Իրանի շահնշահ, որով Իրանում հաստատվել է Փահլավիների արքայատոհմը:
գ) 1940-1941 թթ. Հեռավոր Արևելքում Ճապոնիան փորձել է ծավալվել ի հաշիվ ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակից Մոնղոլիայի, սակայն ջախջախվել ու հետ է շպրտվել:
դ) 1933 թ. Գերմանիան դուրս է եկել Ազգերի լիգայից, ավելի ուշ զորքերը մտցրել Հռենոսի ապառազմանականացված գոտի, իսկ 1938 թ.՝ բռնակցել Ավստրիան:
ե) 1939 թ. օգոստոսին Մոսկվա է ժամանել Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ի. Ռիբենտրոպը և ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Ա. Միկոյանի հետ օգոստոսի 23-ին ստորագրել խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագիրը:
զ) 1940 թ. հունիսին գերմանական բանակը գրավել է Փարիզը, իսկ հունիսի 22-ին ստորագրված անձնատվության պայմանագրով երկիրը բաժանվել է երկու գոտու՝ հյուսիսային ու հարավային:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2023 թ.